

Հ. Դարբինյան

ՍՍՐՄ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(1920—1940)

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, սո-
վետական կարգերի հաստատումն աննախընթաց պայմաններ են ստեղծում
ժողովուրդների լարեկամության ամրապնդման ու ծաղկման համար:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո մեր երկրի ժողովուրդների բարեկա-
մությունը բնութագրվում է ղեպի սոցիալիստական հայրենիքը, ղեպի սովե-
տական պետական կարգն ունեցած բուռն սիրով, սոցիալիստական ազգերի
շահերի ու ձգտումների բնդհանրությամբ, կոմունիզմ կառուցելու նրանց
միասնական նպատակով: Այս ամենն իր գեղարվեստական արտացոլումն է
դառնում երիտասարդ սովետահայ գրականության մեջ:

ժողովուրդների բարեկամությունը սովետահայ դրականության մեջ ար-
տացոլվում է տարբեր թեմաների, գեղարվեստական բազմապիսի ձևերի մի-
ջոցով:

Սովետահայ գրականության զարգացման վաղ շրջանի համար առանձնա-
պես քնդող են անդրկովկասյան ժողովուրդների նախառևոլյուցիոն բարեկա-
մությունն արտացոլող երկերը:

Ստեփան Ջորյանի «Ռոմանտիկ պատմություն» (1919 թ.) երկի թեման
այլազգի երկու երիտասարդների՝ ադրբեջանցի Ալու և հայուհի Կատարի ան-
կեղծ, սակայն դժբախտ սիրո տխուր պատմությունն է:

Ալին օժտված է մարդկային բարձր արժանիքներով՝ աշխատասիրությամբ,
ազնվությամբ ու անկեղծությամբ: Ըր այդ բարեմասնությունների համար նա
վալելում է Կատարենց ողջ բնտանիքի սերը: Բայց Կատարի մոլեռանդ հայրն
իմանալով Ալու և իր աղջկա գաղտնի սիրո մասին, դաժանաբար բաժանում է
նրանց, խափանում երիտասարդների երջանկությունը: Բռնությամբ բաժան-
ված սիրահարները, սակայն, երբևր չեն մոռանում միմյանց. տարիներ հետո
էլ Ալին սրտի դողով է խոսում Կատարի մասին և արտասվում հիշելով նրան:
Ստեղծագործության նյութ դարձնելով այս պատմությունը, Ջորյանը դա-
տապարտում է ժողովուրդների միջև հրահրվող ազգային ու կրոնական խտրա-
կանությունը, դրան հակադրում սիրո, բարեկամության իր իդեալը:

Այս առումով հետաքրքրական է նաև «Նրգը» պատմվածքը, որտեղ Սա.
Ջորյանը վերարտադրում է հայ-ադրբեջանական կոտորածների օրերին Շու-
շիում տեղի ունեցած մի դեպք: Ադրբեջանցու սրտառուշ բայաթին հարկա-
դրում է կովող կողմերին դադարեցնել հրաձգությունը. և՛ հայերը, և՛ ադրբե-
ջանցիները կլանված ունկնդրում են երգը, ոչ ոք չի ցանկանում կրակոցով
խախտել հանդիսավոր երաժշտությունը, իսկ ադրբեջանցին շարունակում է
երգը՝ կրկնելով.

«Նդրայրենե՛ր՝ հայե՛ր, թուրե՛ր, լսեցե՛ր ինձ...

Կրկնում է այս խոսքերը մեջընդմեջ ու շարունակում բայաթին:

Երգեց այսպես թուրքը մի ժամ, երկու ժամ, երեք ժամ,— դրում է Զարյանը,— դժվար է ասել որքան ժամանակ,— նրա ձայնից հրացանաձողությունը հետզհետե լուեց բոլոր դիրքերում, և ամբողջ քաղաքը շունչը պահած, կարծես մի սիրտ, մի ականջ՝ ունկնդրում էր նրան»։

Աղբրեջանցու երգի մեջ կրկնվող բառերը՝ «եղբայրներ, հայեր, թուրքեր, լսեցեք ինձ», թուշում են դիրքից դիրք, վերածվելով եղբայրության և բարեկամության ղորևղ զվացման, սալառնում դիրքերի վրա, փոթորկում մարդկանց սրտերը, տողորում փոխադարձ սիրո, բարեկամության ու խաղաղասիրության զգացմունքներով։

Այլ. Բասադկյանի «Բայրամ Ալին» (1924 թ.) և «Համբերանքի շիրուխը» (1928 թ.) պատմվածքներում հայ և աղբրեջանական ժողովուրդների փոխադարձ սերն ու համակրանքը քացահայտվում է սոցիալական անհավասարության, ցարական կարգերի դեմ նրանց բարձրացրած բողոքի պատկերմունք միահյուսված։

Ինչպես Բայրամ Ալին (համանուն պատմվածքի հերոսը), այնպես էլ Օհան Ամին («Համբերանքի շիրուխը») բնկերի, աղալարների դեմ հողի, ջրի համար վրեժխնդիր մարդիկ են, նրանք հենց իրենց ձեռքով են տեսնում ժողովրդի արյունը ծծողների դատաստանը։ Յասաուլների ու պրիստավի դեմ ծառայած Օհան ամին բանտում մի առանձին մտերմությամբ է կապվում Միրզա Մեհտուհետ, որովհետև Օհանի նման վերջինս էլ արդար հացի ու աշխատանքի պաշտպան է և հավատում է արդարության հաղթանակին։ «Քաշենք համբերանքի շիրուխը մինչև ավատության դուռը բացվի», սիրում էր մշտապես կրկնել Միրզա Մեհտուին։ Միրզա Մեհտու իմաստուն խոսքերն ու սիրած երգը երբեք չեն ջնջվում Օհանի հիշողությունից։

Կանաչ դաշտի պարզ հովիվը

Շահի ոսկե բլուրից լավ է։

Քրտինքովդ կերած հացը

Սուլթանների ճաշից լավ է։

Շահիբների մուղամներից

Քամու աղատ շունչը լավ է։

Հարուստ, հպարտ աղբորիցդ

Սրտամոտ օտարը լավ է։

Այս երգը Միրզա Մեհտուն բնութագրում է որպես արդար, աշխատասեր, ազնիվ ու բարեկամասեր մարդու։

Օհան ամու և Միրզա Մեհտու, ինչպես և նրանց հետ միասին բանտարկված տարբեր ազգությունների ներկայացուցիչների, բարեկամության պատկերման միջոցով Բասադկյանը ցույց է տվել, որ հայ, աղբրեջանցի, բուրդ, ուս և այլ ազգությունների աշխատավորների համերաշխության և բարեկամության նախապայմանը նրանց շահերի ընդհանրության դիտակցության մեջ է։

Վերոհիշյալ ստեղծագործությունները շախաղանց կարևոր նշանակություն ունեն մեզ հետարբրոդ հարցի լուսարանման տեսակետից։ Դրանք վկայում են, որ սովետահայ դրականությանը, սկսած իր կազմավորման առաջին իսկ սարիներից, մշտապես զբաղվել և հուզել է ժողովուրդների բարեկամության թեման։

Նրիտասարդ սովետահայ գրականության մեջ լայնորեն արտացոլվում է անդրկովկասյան ժողովուրդների ունեցած հաղթանակը, նրանց համատեղ պայքարը սովետական կարգերի հաստատման համար։ Պատմաուսուցիչն ինքնաշարժ ստեղծվում են ժողովուրդների բարեկամությունն արտացոլող բազմաթիվ ուշագրավ երկեր։

Դրամատուրգիայում հայ ժողովրդի ազատագրության համար մղված մարտերի արտացոլմանն են նվիրված Վ. Վաղարշյանի «Օղակում», Ա. Գուլակյանի «Արշալուսին», Արշ. Դարբնու «Երբ բացվում է մանուշակը» դրամաները։ Բոլոր այս ստեղծագործություններով կարմիր թելի նման անցնում է պատմական այն մեծ ճշմարտությունը, որ անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը, նրանց դաշինքը ուսումնասիրելով ժողովրդի հետ հանդիսացավ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրման հիմնական նախապայմանը։ ժողովրդական կենդանի կերպարներ ստեղծելու և արտահայտած գաղափարներն ավելի պատկերավոր դարձնելու համար դրամատուրգներն օգտագործում են ժողովրդական լեզվի հյութեղ արտահայտչական միջոցները։

Գեղարվեստական տեսակետից ավելի ամբողջական գործ է Վ. Վաղարշյանի «Օղակում» դրաման, որը, շնայած իր որոշ թերություններին (առանձին կերպարների մակերեսայնությանը, տեղ-տեղ բարբառի անհարկի գործածությանը և այլն), լուրջ երևույթ էր 30-ական թվականների հայ գրականության մեջ։ «Օղակում»-ը սովետական ժողովրդի կյանքի արշալույսն արտացոլող առաջին դրամատիկական երկն է մեզանում, որն իր արտահայտած գաղափարների կենսունակության և գեղարվեստական անուրանալի արժանիքների շնորհիվ 1930 թ. մինչև հիմա երբեք չի իջել բեմից։ Եվ երկար ժամանակ բեմադրվելով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի բազմաթիվ թատրոններում, նպաստել է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամական կապերի էլ ավելի ամրապնդմանը։

Արձակում ժողովուրդների պատմաուսուցիչն արեկամությունն առավել ցայտուն կերպով դրսևորվեց Ակսել Բակունցի ստեղծագործություններում։ Բակունցի սրտին առանձնապես մոտ էր հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության հարցը։ Նա տարբեր առիթներով անդրադարձել է այդ թեմային, պատկերել երկու հարևան ժողովուրդների հոգեհարազատությունն ու ջերմ սերը, վառ ու բնորոշ շտրիկներով մերկացրել ազգայնական պարտիաների հակաժողովրդական գործունեությունը։ Այդպիսին է «Այու սարի լանջին» պատմվածքը, որտեղ վերարտադրվում է 1918 թ. հայ-ադրբեջանական ընդհանրության ժողովուրդների մի զեպը։

Իր առօրյա հոգսերով տարված զանգեզուրցի հայ շինականի հանգիստը խանդարում է աղգամիջյան կռիվների բոթը։ Գյուղը կծկվում է, վախից կուչ գալիս։ «Բայց կերուխում կար հարուստ տներում...», — ասում է հեղինակը մատնանշելով աղետի աղբյուրը։

Բակունցը չի պատմում, ոչ էլ ուրիշներին է պատմել տալիս համընդհանուր այդ աղետի պատճառների ու հեղինակների մասին։ Արտաքուստ անտարբեր նա նկարագրում է դեպքերի զարգացման ընթացքը։

«Գյուղում զենքը մահալից շատացավ։

...Ջենքի հետ կողոպուտն էլ շատացավ։

...Համարյա ամեն իրիկուն դիրքապահներ էին շրջում գյուղի շուրջ կողմը։

Նոր մարդիկ էին եկել՝ խմբապետ, վաշտապետ, որոնք լավ սենյակներում Տեղեկագիր 11—4

էին ապրում, յուղ ու հալ պահանջում, հեռանում գյուղից մի քանի օրով և թալանով վերադառնում»։

Խտացված պատկերի մեջ բացահայտվում է երևույթի բուն էությունը։ Բակունցը մերկացնում է հայ-աղբերջանական կոտորածների իսկական հեղինակներին՝ ազգի անունից ճառող դաշնակցականներին։

Աշխատավոր գյուղացու վերաբերմունքն այդ կոիվներին պատմվածքում բացահայտվում է նախապալան Պետու կերպարի միջոցով։ Իր ամբողջ կյանքում մահակից բացի ուրիշ ոչ մի զենքի հետ զործ չունեցած Պետու ձեռքը դաշնակցական խմբապետները հրացան են տալիս։ Պետին դիմադրում է սպորթ, չի ուզում հրացան առնել, բայց նրան պարտադրում են բռնի ուժով։ Նախանշական է, որ Պետին հրացանը բռնում է մահակի նման և գյուղից հեռանալուց հետո մի քարի տակ պահում։ Նա ավելորդ է համարում հրացանը, որովհետև համոզված է, որ սարում իր հետ աղուհաց կերած աղբերջանցի հոփիվները երբեք չեն կրակի իր վրա, և կարողություն է նախում հայ-աղբերջանական սահմանում ընկած Այու սարի լանջին, անձկություններ սպասում ճանապարհների բացվելուն։ Խաղաղասիրական այս տրամադրություններով էլ մահանում է Պետին (իր սիրած Այու սարի լանջին, դաշնակ խմբապետների հրամանով դիրքեր փորելու ժամանակ, զոհ է դառնում պատահական զնդակի)՝ անհուն բարություններ և միամիտ սիրով դեպի մարդը, խոտը, կովը, ծաղկած սարերը։

Հայ և աղբերջանական ժողովուրդների բարեկամության հարցին Բակունցը անդրադառնում է նաև «Կարմրաքար» անավարտ վեպում։ Ինչպես նախորդ դեպքում, այնպես էլ այստեղ չկան տարբեր ազգերի ներկայացուցիչներ։ Հեռուները հայ մարդիկ են իրենց աշխատանքային առօրյայով, իրենց մտորումներով ու խոհերով, բայց այդուհանդերձ իր ամբողջ հմայքով ու վեհություններով բացահայտվում հայերի ու աղբերջանցիների բարեկամությունը։

«Կարմրաքար»-ի «Ջեյթալի ավերումը» գլուխը «Այու սարի լանջին» պատմվածքում արծարծված գաղափարների տրամաբանական շարունակություն է։

Ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետ, Բակունցը ևս չի գունազարդում իրականությունը։ Նա ցույց է տալիս, թե ինչպես դաշնակցականների տիրապետության մղձավանջային պայմաններում մարդն օտարանում է իր մարդկային էությունը, խորանում է ժողովրդական ողբերգությունը։ Ահավոր սովը տներին դուրս է հանում հայ կանանց ու տղամարդկանց մի խումբ, որոնք, ինչպես հեղինակն է ասում, ագռավների երամի նման քայլ առ քայլ հետևում են Ձեյթան ավերող դաշնակցական զորքին, սպասելով մինչև հաղթողը մաշկի որսը, որպեսզի իրենք ուտեն լեշը։ Քաղցից ու ծայրագույն թշվառությունից մոլեղնած այդ մարդիկ պատեպատ են զարկվում, մարդագայլի նման եղունգներով փորում գետինը, դուրս հանում փայածների պահուստը։ Գնալով պատկերներն ավելի մռայլ են դառնում։ Ահա մի տեղ քանդվող պատից ընկած քարը ջախջախում է դարու պարկը շալակած մի տղամարդու։ Հետևից եկող կինը ողբում է ամուսնու մահը, լալիս է և միաժամանակ հավաքում պարկից թափված դարու հատիկները։

Բայց կատարվում է ավելի սարսափելին. դաշնակցականները խլում են ժողովրդի ճանկած ավարի փշրանքները։ Դաշնակցական սպան մի պարկ ալյուրով ծեք սկեսորդից գնում է նրա հարսի պատիվը։

Խոր վիճ է բացվում դեպքերին ականատես գյուղացու աչքերի առջև: Սար-
ափնյին էլ ուրիշ բարձունք չունի նրա համար: Միանգամից ընկնում է թան-
ձրը բողբ ժողովրդի աչքից, լսվում են ինքնաբնագատության և անեծքի խոս-
յեր:

«Հարեանի մալը հարամ է»:

Իսկ ովքե՞ր են այդ հարեանները՝ Զեյթալի բնակիչները: Դրանք իրենց
առտնին աշխատանքներով զրադված բարի, խաղաղ մարդիկ են, որոնք կո-
տորածներից մեկ օր առաջ սիրով զրուցում էին իրենց հայ բարեկամների հետ:
Որեկ առավոտ... այս պատին մի «կաճե» թրիք էր ծեփում: Ահա դեռ մատ-
նիքի հետքը մնում է:

...Թեմուրը տաշում էր արորի սեպը, օրերը տաքանում են, վաղը մյուս
օրը սիտի վար սկսվի» և ասված, բայց՝ սպառնալից:

Բարձր հումանիզմով են ներծծված ակսելյան էջերը:

Ցույց տալով սոցիալական դաժան իրականության կործանարար ազդե-
ցությունը մարդու վրա, Բակունցը մարդկանց մեջ որոնում և ընդգծում է
մարդկային՝ ժողովուրդների սիրո և բարեկամության անհաղթելիությունն ու
հարատևությունը, որն ավելի սլայծառորեն է արտահայտվում համընդհանուր
այդ մռայլ ֆոնի վրա: Որքա՞ն քնքշություն, սեր ու գորովանք է արտահայտ-
ված հարեան աղբյուրների նկատմամբ, երբ այդ ընդհանուր ավերվածու-
թյան ու վշտի պահին կարմրաքարցի Չոլախ Պուզանը ղողզողացող սրտով
Թեմուրի պարտեղի քանդված պատի բարերն է շարում, կամ երբ նույն կար-
մրաքարցի շինականը, վտանգի ենթարկելով իրեն, դաշնակցականներից փրո-
կում է իր բարեկամ Ֆահրադի եթիմների պղնձեղենը:

Բակունցը մարդկայնությունը տեսնում է ժողովրդի պարզ ու հասարակ
մարդկանց մեջ և համոզված է նրա հաղթանակին: Համոզված է, որ այդ մարդ-
կայնությունն իր հետ բերում է քնքշություն ու մտքի իմաստություն: Հենց այդ
է շնչովում Չոլախ Պուզանի կերպարի մեջ. «Կարծես այդ օրը Զեյթալում միայն
մի ուրիշ Չոլախ և նրա փոխարեն վերադառնում է ծանր խոհերով մարդը, որ
եյք է փնտրում, հաղար գուռ է բախում ու եյք շի գտնում»: Մարդկայնության
հենց այս արտահայտությունները՝ քնքշությունն ու իմաստությունն է, որ Օրու-
չին ու Աթալին կյանքի ամենածանր օրերին էլ հավատարիմ է պահում եղ-
բայրության ուխտին («Եղբայրության ընկուղենիները»):

Թե՛ «Այու սարի լանջին» պատմվածքում, թե՛ «Կարմրաքարում» և թե՛ մա-
նավանդ «Եղբայրության ընկուղենիներում» Բակունցը ձգտում է թափանցել
մարդկային հոգեբանության խորքերը, կատարել կյանքի դարաշրջանային
ընդգրկում:

«Եղբայրության ընկուղենիները» ևս սկսվում է հայ գյուղի ծանր վիճակի
նկարագրումից, երբ ամբողջ Երկրում մոլեգնում էր սովը և դաշնակցական-
ների ու մուսավաթականների ջանքերով սանձադեբծված ազգամիջյան կռիվ-
ները: Այստեղ ավելի սլայծառ է գծվում հայ և աղբյուրների հերոսների բարձր
հումանիզմն ու մարդկային հարաբերությունների վեհությունը: Աթա ապերը իր
քերվա Օրուչի հետ կիսում է տաշտում մնացած կորեկի վերջին հացն ու մի
քսակ այլուր, լավ ժամանակների պատրանք ստեղծելու համար Օրուչի գրու-
սյանը լցնում աշխանից մնացած մի բուռ ընկուղը՝ երեսանների համար: Քիր-
վա Օրուչն էլ դատարկ չի այցելում իր բարեկամին. նա Աթա ապոր համար բե-

յում է իր սեփական ձեռքով աճեցրած ծխախոտը, այսինքն այն, ինչ դեռ նրանից չեն վերցրել մուսավաթական դոշիները: Փոքրիկ ու սրտառուչ մի դետալ է այս, բայց հենց փոքրիկ այդ դետալն էլ Բակունցը դարձրել է պատմվածքի պաշտպանական մեխը: Այնտեղ, ինչպես մի կաթիլ ջրում, ցոլանում է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ու հոգեհարազատությունը:

Ժողովրդական խոր իմաստությունն են մարմնավորում Աթան ու Օրուշը: Դաժան իրականության մեջ բնավ չի խամրում նրանց հավատն ապագայի նկատմամբ: Խոսելով աղգամիջյան կոիվների, աղքատության ու թշվառության մասին, Օրուշը վստահ առում է. «...Ճշմարիտ խոսք է, Աթա, այս ամենը կանցնի և մեր բարեկամությունը կմնա»: Ու մնում է այդ բարեկամությունը դաշնակցականների ձեռքով գնդակահարված հայ ռեուլուցիոներ զինվորների ու աղբրբեջանցի Օրուշի եղբայրական գերեզմանի վրա խշշացող ընկուզենիների կերպարով: Աղմկում են եղբայրության ընկուզենիները նրանց գերեզմանի վրա, հյուսում եղբայրության ու բարեկամության անմահ էպոսներ:

«Եղբայրության ընկուզենիներում» չկա ռեուլուցիոն պայքարի նկարագրություն, բայց կա այդ պայքարի համար հասունացող մի սերունդ, որի ներկայացուցիչը Նիսիանց Անդրին է: Այդ սերունդն ըմբոստանում է դաշնակցականների ու մուսավաթականների տիրապետության դեմ, նոր իմաստ հաղորդում Աթա ապուր և քիրվա Օրուշի բարեկամությանը: Այդ են վկայում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին նվիրված ակսելյան պատմվածքներն ու ակնարկները:

Այսպիսին է Թեմուրի, Դավթի և Դանիելի բարեկամությունը՝ «Հերոս նոքարը» ակնարկում: Թեմուրը, որ երկար տարիներ նոքարություն է արել հայ գյուղում, մերվել է հայերին, հարադատի զգացմունքներով կապվել նրանց, Հայաստանի ազատագրության համար մղվող մարտերին ինքն էլ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում և հերոսաբար զոհվում հարազատ Հայաստանի համար:

Թեմուրը պատկերված է մարդկային իր մեծ սրտով, մարդու և ընկերոջ հանդեպ ունեցած անհուն հոգատարությունը ու նվիրվածությամբ:

Այնքան իրական, միաժամանակ այնքան ռոմանտիկ ու վիհ է Թեմուրի կերպարը, որ դժվարանում ես որոշել՝ որտեղ է վերջանում իրականությունը և որտեղ է սկսվում հեղինակի ստեղծագործական ֆանտազիան: Բակունցը գեղարվեստական ակնարկի այս կոնկրետ նյութից լայն ընդհանրացումներ է անում հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության համերժության մասին:

Անդրկովկասյան ժողովուրդների ռեուլուցիոն շարեկամությունն արտացոլող ստեղծագործությունների շարքում հատուկ տեղ են զբաղում Բաքվի հերոսական 26 կոմիսարների հիշատակին նվիրված բանաստեղծություններն ու բալլադները:

Անգլիական իմպերիալիստների և նրանց վարձկաններ մենշևիկների, Լսենների, դաշնակցականների և մուսավաթականների ձեռքով 1918 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկովկասյան ավազուտներում եղբայրական մահվան դատապարտված քսանվեց կոմիսարների հերոսական կյանքն ու պայքարը ժողովուրդների մարտական բարեկամության կենդանի մարմնացում է, որն ապրում է սովետական ժողովուրդների սրտերում, ոգեշնչում նրանց աշխատանքային ու մարտական սխրագործություններին:

Քսանվեց կոմիսարների անմահ հիշատակը ստեղծագործության անսպառ աղբյուր է դարձել սովետական բազմազգ գրականության համար: Սովետական գրականության զարգացման տարրեր էտապներում ստեղծվել են մեծ քանակությամբ երկեր, որոնք մշտապես նպաստել են մեր երիտասարդությանը սովետական հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու գործին: Քսանվեց կոմիսարների հերոսական կյանքին ու պայքարին անդրադարձել են Վ. Մայակովսկին («ГУЛОМ ВОССТАНИЙ НА ЭХО ПОМНОЖЕНИЕМ», 1922—1925 թթ.), Դ. Բեդին («Մի մոռացե՛ր երդումը», 1923 թ.), Ս. Նսենինը («Բալլադ 26-ի մասին», 1924 թ.), Ն. Ասենը («Քսանվեց», 1925 թ.), Ս. Վուրդունը («Քսանվեց», 1935 թ.), Ս. Կիրսանովը («Քսանվեց», 1938 թ.), Հակոբյանը («Քսանվեցին», 1919 թ.), Չարենցը («Բալլադ քսանվեցի մասին», 1928 թ.) և ուրիշներ:

Սովետական բազմազգ գրականությունը տարբեր լեզուներով, բայց սիրով, հարգանքի և երախտագիտության նույն զգացմունքով գովերգում է 26 կոմիսարների հիշատակը, նվիրում նրանց արյունաբերու դահիճներին: Այնուհետև այն տրագիցիոն թեմա է դառնում մասնավորապես սովետահայ պոեզիայում: Պրա տոաջին արձագանքն է Հ. Հակոբյանի «Հիշատակին քսանվեց կոմիսարների» բանաստեղծությունների ժողովածուն, որը լույս տեսավ Գ-ի սպանության լուրը հայտնի դառնալու տարին՝ 1919 թվականին: Հետագա տարիներին ստեղծվում են Հ. Հակոբյանի «Քսանվեց էին» (1920 թ.), Խ. Չարենցի «Բալլադ քսանվեցի մասին» (1928 թ.), Ն. Չարյանի «Քսանվեց կոմիսարներին» (1928 թ.), Գ. Մահարու «Բալլադ Բաքվի և քսանվեցի մասին» (1928 թ.), Գ. Սարյանի «Քսանվեց ընկերներ» (1937 թ.), Վ. Ալադանի «Քսանվեց կոմիսարների մահը» (1926 թ.), «Քսանվեց կոմունարներին» (1929 թ.), Վ. Նորենցի «Շահումյանի արձանին» (1935 թ.) և այլ երկեր:

Սովետահայ գրողները պատկերելով 26 կոմիսարների եղբրական սպանությունը Աղշակույմայի անապատներում, բացահայտում են հերոսականությունը ողբերգական այդ ակտում, 26-ի գործի վեհությունը, նրա նշանակությունը աշխատավոր մարդկության համար:

Նրգելով 26 կոմիսարների անմահ հիշատակը, կերտելով նրանց վեհ, հերոսական կերպարները և ցույց տալով, «...որ արյունով նրանց թարմ նոր Բարձի հիմքերն են ամրացել...» (Հ. Հակոբյան), մեր գրողները վերածնված հերոսական Բաքվի սոցիալիստական շինարարության մեջ տեսնում են 26-ին, որոնք քայլում են սոցիալիզմ կառուցող սովետական մարդկանց շարքերում, աշխատում նրանց հետ:

Գեղարվեստական տարբեր հնարքներով ու տարբեր ուժով 26-ի անմահության զաղափարն է արտահայտված նաև Ն. Չարենցի «Բալլադ քսանվեցի մասին», Գ. Մահարու «Բալլադ Բաքվի և քսանվեցի մասին», Վ. Նորենցի «Շահումյանի արձանին» ստեղծագործություններում: Ն՛վ Չարենցի, և՛ Մահարու, և՛ Նորենցի գործերում սովետական մարդկանց աշխատանքային էնտուզիսմը պատկերվում է որպես սխրանք՝ կենսագործելու Բաքվի հերոսական կոմիսարների իդձերն ու երազանքները, որպես նրանց պայքարի և գործի շարունակությունը, բանաստեղծական գունեղ պատկերներով ցույց տրվում, որ նրանք ապրում են սովետական միլիոնավոր աշխատավորների սրտերում «ու Ռիթմի նման անտես, ձուլվելով սրտերին նրանց» ներշնչում եռանդ ու ավյուն, մղում նոր հաղթանակներին: Այս իմաստով առավել բնորոշ է Չարենցի բալլադը, որտեղ

կոմիսարները ասես կենդանի մասնակցում են Բաքվի հերոսական բանվոր դասակարգի խորոյա աշխատանքին ու սրայքարին և՛

Ասում են նրանք. — տոկացե՛ք,
Տոկացե՛ք, ընկերներ անդին,
Վառվել է հորիզոնը լուսե,
Առավոտը ցանկալի կյանքի:
Քանի կաք, ընկերներ՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդու —
Մեր երթին-վախճան չկա,
Մեր պայծառ դործին սլարտություն ...

Քսանվեց կոմունարների կենդանի, ցայտուն կերպարները, լիրիկական ջերմ շունչը, պատկերների դինամիզմը, կոնկրետությունն ու խորությունը շեշտակի նպատակասլացություն են հաղորդում բալլադին և ընթերցողին համակում 26-ի անմահության զաղափարով: Չարենցի «Բալլադ քսանվեցի մասին» ստեղծագործությունը քսանվեց կոմիսարների հիշատակին նվիրված լավագույն երկերից է:

Ժողովուրդների ռեվոլյուցիոն մարտական բարեկամությունն իր արտացոլումն է գտել նաև Չարենցի «Կապկազ» սատիրական պոեմում, «Երգ ժողովրդի մասին» և «Ամենասուրբ» ստեղծագործություններում:

«Կապկազ»-ում անդրկովկասյան ժողովուրդների անխախտ դաշինքը բացահայտված է Անդրկովկասում դործող բուրժուական ազգայնական պարտիաների ու նրանց Ետարերկրյա տերերի դեմ մղված ակտիվ, ռեվոլյուցիոն պայքարի ֆոնի վրա:

Այս պոեմում ղեպքերը ծավալվում են ցարիզմի տապալման և ժամանակավոր կառավարություն ստեղծելու օրերից և ավարտվում Անդրկովկասում ռեվոլյուցիայի ու սովետական կարգերի հաղթանակով:

«Կապկազ»-ը գրված է ժողովրդական թամաշաների նմանությամբ: Ստեղծագործության այս ձևը պոետին հնարավորություն է ընձեռել, օգտվելով ժողովրդական լեզվի պարզ, միաժամանակ չափազանց հարուստ ու դիպուկ արտահայտչական միջոցներից, դեղարվեստական խտացած պատկերների միջոցով հասնել մեծ ընդհանրացումների:

Սպանիչ է բանաստեղծի ծաղրը անդրկովկասյան ժողովուրդների միջև առկա լինելու հրահրող ազգայնական պարտիաների, անգլո-ամերիկյան և գերմանական իմպերիալիստների նկատմամբ: Արտահայտչական ժլատ, բայց խիստ դիպուկ միջոցներով, երբեմն մի շտրիխով, կամ փոքրիկ նյութանոցով Չարենցը կարողանում է բացահայտել ամենաէականը, ամենաթնորոշը այդ պարտիաների գործունեության մեջ, մերկացնել նրանց հակաժողովրդական էությունը: Այսպես.

Գեղեչկորի. — Մտնում է,
Սուս ու փուս, խոնարհ,
Չորում, կանգնում է ետևի
Ոտերի վրա:

Մեկենն ընթերցողի առջև կանգնում է մենշևիկների լիդեր Գեգեչկորին՝ իր արդահատելի ստորաքարշությանը, ստրկամտությամբ իմպերիալիստական տերերի հանդեպ:

Կոնտրոլությունի ալս պարտիանների ու նրանց օտարերկրյա տերերի գիշատիչ էությունը «Կապկազ»-ում հակադրվում է ռուս, հայ, վրացի և ադրբեջանական ժողովուրդների հավաքական հզոր ուժը, նրանց ռևոլյուցիոն դաշինքը, բացահայտվում է այն ճշմարտությունը, որ այդ դաշինքը նշանավորում է ալի-դային թշնամանքի և ատելության վախճանը:

«Երգ ժողովրդի մասին» պոեմում Չարենցը ձգտում է պատկերել ռուս ժողովրդի պատմական անցած ուղին (գյուղացիական խռովություններից մինչև շոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան) և մարմնավորել իր անսահման սերը ազատաբաղձ ու հերոսական ռուս ժողովրդի նկատմամբ:

Ժողովուրդների ինտերնացիոնալիստական փոխհարաբերությունների ալիտացումն իմաստով ավելի լայն ընդգրկում ունի «Ամենապոեմը»: Պոեմի հիմնական հարցը սոցիալիստական ռևոլյուցիայի և դրա հետ կապված հայ ժողովրդի ազատագրության հարցն է:

«Ամենապոեմ»-ում պոետական մեծ ուժով բացահայտված է շոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի փրկարար նշանակությունը սովետական ժողովուրդների և ողջ աշխարհի մարդկության համար:

Վեր հանելով շոկտեմբերյան ռևոլյուցիայի համաշխարհային նշանակությունը, Չարենցը խրոխտ կերպով հնչեցնում է ռևոլյուցիայի հաղթանակն ապահոված սովետական ժողովուրդների ու ամբողջ աշխարհի աշխատավորների եղբայրության ու համերաշխության հզոր երգը, արտահայտում իր ձգտումներն ու համոզմունքը ամբողջ աշխարհի ժողովուրդների կոմունիստական միասնության վերաբերյալ: Լիտոտայի և հիպերբոլայի վարպետ զուգորդումով նա ստեղծում է ժողովուրդների բարեկամության մի անմոռաց պատկեր, որի ղաղափարական հնչեղությունը գնալով ավելի ու ավելի ուժգին է դառնում:

30-ական թվականներին սովետաճալ գրականության մեջ առաջին պլան է մղվում սոցիալիստական հասարակության կառուցման ընթացքում կոփվող ժողովուրդների բարեկամության պատկերումը:

Դեռևս շոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ «արդարություն, հավասարություն և Լոբայրություն» երգող Հ. Հակոբյանը ռևոլյուցիոն պայքարի մոտիվների հետ միասին խանդավառությամբ հնչեցնում է նոր կյանք ստեղծող ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության թեման, գովերգում նրանց հերոսական աշխատանքը, ձեռք բերած նվաճումները տնտեսության և կուլտուրայի լինադավառներում՝ «Ձորագետում», «Ռիոնգետ» և լայն: Ընդհանրացման իմաստով առավել հետաքրքրական են «Ջարթոնք» բանաստեղծությունը և «Վոլ-խովստոյ» պոեմը:

Անդրկովկասյան ռեսպուբլիկանների ձեռք բերած նվաճումները, ինչպես նաև Վոլխովստոյի շինարարությունը բոլշևիկ բանաստեղծը դիտում է որպես սոցիալիզմի հաղթական կառուցման ակնառու վկայություն, որպես «...մի հիմնաքար մեծ դալիքի շենքերից» և հրճվանքով նշում, որ այն համաժողովրդական սեփականություն է:

Հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության նույն գաղափարներն են արտահայտված նաև «Կարմիր հայրենիքիս մեղդիաներից» բանաստեղծությունների շարքում:

Սոցիալիզմի հաղթանակը, սովետական մարդու՝ իր հայրենիքի սիրով հպարտ լինելու զգացումն է արտահայտված «Բաքու» բանաստեղծության մեջ։ Նկարագրելով վերածնված սոցիալիստական Բաքուն, բանաստեղծը ցույց տվել, որ նոր Բաքվի հիասքանչ կյանքը ստեղծվել է եղբայրական ժողովուրդների թափած արյամբ։

Բաքվի սոցիալիստական շինարարության հաղթանակների մեջ Հակոբյանը տեսնում է ՉԾ-ին՝ որպես կենդանի ժամանակակիցների, որոնք րայում են Բաքվի հերոսական պրոլետարիատի շարքերում։ Այսպիսով բանաստեղծը դրսևեորում է Բաքվի բազմազգ պրոլետարիատի ռեկուցիոն պայքարի և սոցիալիզմի կառուցման միասնության գաղափարը։

Պոետը, որպես լիրիկական հերոս, ներկա է իր գրեթե բոլոր ստեղծագործություններում և ակտիվ միջամտությամբ գնահատում, արժեքավորում է դեպքերը, լիրիկական ջերմ շունչ ու հուզականություն հաղորդելով նրանց, հաստատում կյանքի ճշմարտությունը, ցույց տալիս, որ ժողովուրդների արդարության, հավասարության և եղբայրության դարավոր երազի իրականացումը հնարավոր դարձավ միայն սովետական կարգերի պայմաններում, ժողովուրդների բարեկամության մեծ ընտանիքում։

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը ժողովրդական տրեստեսության վերականգնման և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում իր արտահայտությունն է գտել նաև սովետահայ գրականության մյուս ներկայացուցիչների՝ Դեմիրճյանի, Չարենցի, Զորյանի, Զարյանի, Սարյանի, Վչուրուևու և մյուսների ստեղծագործություններում։

Եղբայրական վրաց ժողովրդի սովետական շրջանի կյանքն է արտացոլված Ե. Չարենցի («Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանին»), Ա. Վշտունու («Սաքարթվելո» բանաստեղծության մեջ), Գ. Սարյանի («Երգը Վրաստանից», «Կենաց» և այլ բանաստեղծություններ), Մ. Պետրոսյանի («Նելոքսերա», «Զագեսի բանվորը» պատմվածքներում), Մ. Թորգոմյանի («Լադոյի պատմածը», «Իվլիսա» և այլ գործերում) և մի շարք ուրիշ գրողների ստեղծագործություններում։

Մ. Պետրոսյանը «Զագեսի բանվորը» (1925 թ.) պատմվածքում պատկերել է սովետական մարդկանց համակած աշխատանքային խանդավառությունը Սովետական իշխանության առաջին տարիներին։ Պատմվածքի հերոսը՝ Ակոբը, կյանքի իսկական իմաստը տեսնում է ստեղծագործական աշխատանքի մեջ։ Ակոբին ոգեշնչում է այն գիտակցությունը, որ աշխատավոր մարդու աշխատանքի արդյունքները այժմ պատկանում են հենց իրեն՝ աշխատավոր մարդուն։

Հայ և վրացի ժողովուրդների անխախտ բարեկամության գաղափարն է արտահայտված Գ. Սարյանի «Կենաց» բանաստեղծության մեջ։ Բանաստեղծը հանդիսավոր օրերին իրար զարկվող զինու զավերի մեջ սիմվոլացնում է երկու ժողովուրդների անկեղծ սերն ու բարեկամական ղգացմունքները միմյանց նկատմամբ։

Ամեն տոնի զգացմունքով վառ
Երկու զինու զավ խփվում են իրար.
Հայաստանը մեր գինով փրփրուն
Աշտարակն է իր ձեռքին երկարում.

Իսկ Վրաստանը իբրև գավ լեցուն՝
Կախեթն է ահա իր ձեռքը վերցնում:
Այդպես խփվում են բաժաններ երկու
Նրկու եղբայրներ կենաց մեկ մեկու:

Նոր կյանք կառուցող սովետական Ադրբեջանին է նվիրված Ա. Վշտունու «Ադրբեջան» բանաստեղծությունը, որտեղ վերարտադրվում է ադրբեջանական ժողովրդի աննախընթաց հաջողությունները սոցիալիստական աշխատանքի լուսավորչական երում: Սովետական Ադրբեջանի ծաղկող ասպազան բանաստեղծը տեսնում է ՍՍՌՄ ժողովուրդների միասնական աշխատանքի մեջ:

Բանաստեղծությունը գրված է ներքողի ձևով, որի տոնական կենսախինդ ձևը համընկնում է բանաստեղծության զաղափարական հենքին, այսպիսով ստեղծվում է ձևի ու բովանդակության մի գեղեցիկ ներդաշնակություն և հեղինակի արտահայտած առողջ, կենսահաստատ տրամադրությամբ է համակում:

Սովետահայ գրականության զարգացման այս էտապում առանձնակի ուշադրություն է հաակացվել սովետական կարգերի շնորհիվ դարավոր ստրկությունից ազատագրված և նոր կյանքին ակտիվ կերպով մասնակցող ադրբեջանուհու մարդկային վերածնունդը պատկերելու խնդրին:

Արևելքի ազատագրված կնոջ՝ կոմերիտուհու կերպարն է ստեղծել Գ. Սարյանը «Գյուլխանդա» պոեմում, ցույց տալով, որ արևի կարոտ մահացած— զյուլնարանների փոխարեն բարձրանում է խաներից ու շարիաթից վախ չունեցող մի նոր սերունդ, որն ակտիվ կերպով մասնակցում է նոր կյանքի կառուցմանը: Այդպիսին է Գյուլխանդան, այդպիսին են Նիգյարը և Ֆաթման (Գ. Դեմիրճյան — «Նիգյարը»):

Ադրբեջանցու՝ սովետական հասարակարգի ակտիվ քաղաքացու կերպարը, Դեմիրճյանն ստեղծել է նաև «Ռաշիդ» վիպակում: Այստեղ Դեմիրճյանը շեշտը դնում է Ռաշիդի բնավորության նոր գծերի ձևավորման վրա, ցույց տալիս, թե ինչպես նախկին բաարակը սովետական կարգերի շնորհիվ անհայտությունից բարձրանում, դառնում է հասարակական գեմբ: Ռաշիդի կերպարն ստեղծված է գեղարվեստական համոզչությամբ, նրա հոգու ողջ շարժումներով ու նրբերանդներով: Այն սովետական մարդու առաջին հաջողված կերպարներից մեկն է:

Սովետահայ գրականությունը գեղարվեստորեն արտացոլելով գյուղի կուլևկտիվացման պրոցեսները, ցույց է տվել հնի և նորի պայքարի բովում կոփվող ու ամրասլնդվող անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական բարեկամությունը: Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության մոմենտներից մեկն է արտացոլվել Ն. Ջարյանի «Ռուշանի քարափը» պոեմում:

Քարաշամբում հայ գյուղացիների հետ միասին կոլտնտեսային կարգերի ամրապնդման համար ակտիվորեն պայքարող Նովրուզը, շնայած այն բանին, որ հանդես է պալիս շատ էպիգոդիկ ձևով, ամբողջական կերպար է: Նովրուզը պոեմում ներկայանում է իր անհատական ողջ հմայքով, պատրաստակամությամբ ծառայելու նոր կարգերի ամրապնդմանը, օգնելու մերձավորներին և այլն: «Ռուշանի քարափում» Ջարյանը կոնկրետ, շոշափելի գծերով վեր է հանում գյուղում աճող նոր մարդկանց, նոր կյանքի իսկական կառուցողներին՝ ալեքսանների, Նովրուզների մարդկային կությունը, նրանց հակադրում մեռնող դասակարգի ներկայացուցիչներին:

Ուշադրավ է նաև Դեմիրճյանի «Աբղուլ» պատմվածքը: Եթե նովրուզի կերպարը կերտված է դյուղում կուլակների և կուտնտեսականների միջև բորբոքված պայքարի ֆոնի վրա, ապա Աբղուլը կերպարանավորվում է բանվորական կոլեկտիվում ծավալվող աշխատանքային առօրյայի վերարտադրության ոլորտում:

Աբղուլը հսկարտ է այն գիտակցությամբ, որ պրոլետարական պետությունն իր պետությունն է, և այդ գիտակցությունը նրան անձնագոհության է մղում հարազատ պետության շահերը պաշտպանելու համար: Սոցիալիստական աշխատանքի շնորհիվ նա դուրս է դալիս իր նեղ անձնական շահերի սահմաններից, իրեն զգում լայնավորական հզոր կոլեկտիվի անբաժան անդամ: Հեղինակը քայլ առ քայլ պատճառաբանում է Աբղուլի կատարած սխալագործությունը և գեղարվեստորեն միանգամայն համոզիչ է դարձնում պատմվածքի ֆինալը՝ Աբղուլը համայնական սեփականությունը փրկելու համար, առանց վարանելու իրեն նետում է հրդեհի շրջերի մեջ, իր կյանքը վտանգի ենթարկելով, փրկում մի հայ բանվորի կյանքը:

Դեմիրճյանը հմտությամբ է դժագրել Աբղուլի բնավորության նոր գծերի ձևավորումը, ցույց տվել, թե ինչպես է հարստանում նրա ներքնաշխարհը, մարդկային բնավորությունը:

Աշխատանքային պրոցեսներում կոփվող հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունն է արտացոլված Արաղու «Ջրվեժի ցուքում» վիպակում (1935 թ.):

Սովետահայ գրականությանը շատ է դրավել եղբայրական Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն, իր ունիվերսիտետի տրագիկաներով ու սոցիալիստական աշխատանքի հաղթանակներով:

Այդ տեսակետից ուշադրության արժանի են Գ. Սևունցի «Ծովախորշում» վիպակը, Բաթուլ Հուրյանի «Հողի արյունը» և Ս. Գրիգորյանի «Հորձանքներում» պոեմները: Երեք գործերն էլ արտացոլում են Սովետական իշխանության առաջին տարիներին նավթի արտադրանքի համար մղվող պայքարը, որին ակտիվորեն մասնակցում են ադրբեջանցի, հայ և ռուս աշխատավորները:

Այդ գրողներին հաջողվել է պեղարվեստորեն ցույց տալ, որ սոցիալիզմի կառուցման մեծ դործին մասնակցող աշխատավորները, չնայած «տարբեր ազգիք են ու տարբեր ցեղից», «բայց մեկ են հոգով ու կամքով անկող», որ նրանք սովետական կարգերի շնորհիվ դարձել են անբաժան ու մոտ, «դարձել են մեծ ու անխորտակելի», որ ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի լայնվորների, մասնագետների և պաշտիական աշխատողների բարեկամության ու համագործակցության հաստատուն հենարանը սովետական կարգերն են, Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ազգային իմաստուն քաղաքականությունը: Անդրադառնալով նոր կյանքի կառուցող ժողովուրդների բարեկամությանը, սովետահայ գրողները ցույց են տվել, որ ժողովուրդների բարեկամությունը մեր Հայրենիքի անսկզբունքային գրավականն է, բոլոր նվաճումների հիմքերի հիմքը:

Սովետական Հայաստանի հասակ առնելուն զուգընթաց հասունացավ ու առնականացավ նաև սովետահայ գրականությունը: Ավելի հարուստ ու բազմալիզանդակ դարձավ նրա թեմատիկան, ավելի նպատակասլաց դարձավ նրա իդեան: Ավելի ու ավելի լայնացան սովետահայ գրողների հետաքրքրության սահմանները. նրանց ոգեշնչում են ոչ միայն անդրկովկասյան ռեսուրսիկա-

ների նորակառույցները, այլև սովետական Սիբիրն ու նրա հաղթական շինարարները, սովետական Կիրգիզիան և այլն:

Նախապատերազմյան տարիների սովետաճայ գրականության մեջ ՍՍՌԻՄ ժողովուրդների բարեկամության թեմայի դրսևորման հաստատված ձևերից են նաև տարբեր ազգերի ականավոր զավակներին նվիրված բազմաթիվ քանաստեղծություններն ու գրական-հրապարակախոսական հոդվածները (ուշագրավ են Ա. Իսահակյանի մի շարք հոդվածներն ու ելույթները, Չարենցի, Զարյանի, Սարյանի, Շիրազի, Սարմենի և ուրիշների քանաստեղծությունները), հարևան ժողովուրդների բանահյուսության մշակումները, տարբեր լեզուներից կատարվող գեղարվեստական թարգմանությունները, որոնք օգնում են ավելի լավ ըմբռնելու բարեկամ ժողովուրդների ոգին, ավելի մոտիկից և գիտակցաբար կապվելու նրանց հետ:

Այս շրջանի գրականության մեջ կարևոր տեղ է գրավում ժողովուրդների խնտերնացիոնալիստական փոխհարաբերությունների պատկերման հարցը:

Մի շարք ստեղծագործություններում պատկերվում է արտասահմանյան երկրների, մասնավորապես Արևելքի գաղութային ու կիսագաղութային երկրների նկատմամբ, հարստահարված ժողովուրդների վիճակը շահագործողական ռեժիմի պայմաններում (Արաղի — «Խալիչայի երգը», «Արծաթի տակ»), նրանց զարթոնքն ու ազատագրական պայքարը իմպերիալիստական պետությունների արյունոտ լծի դեմ (Ա. Վշտունի — «Նոր Արևելք», 1923 թ., «Սալամնամե», 1924 թ., «Արևելքը հուր է հիմա», 1927 թ. և այլն), արտացոլվում է այդ ժողովուրդների անսահման սերն ու համակրանքը նորաստեղծ Սովետական Միության նկատմամբ (Չարենց — «Լենինն ու Ալին»): Այս կարգի ստեղծագործություններում ցայտուն կերպով արտահայտվում է նոր կյանք կառուցող հայ ժողովրդի ջերմ սերն ու բարեկամական վերաբերմունքը Հոկտեմբերյան սոցիալիստական ռեվոլյուցիայի օրինակով ոգեշնչված Արևելքի ազատաբաղձ ժողովուրդների նկատմամբ:

Հայ կյանքի գրականության մեջ մեր ժողովրդի սերն ու հարգանքը այլ ժողովուրդների նկատմամբ հիմնականում դրսևորվել է կարեկցանքի, ցավակցության ձևով:

Սովետաճայ դրականության մեջ այդ պասսիվ կարեկցանքը փոխարինվում է իմպերիալիստական տերերի դեմ Արևելքի ժողովուրդների բարձրացրած ակտիվ բողոքի ռեվոլյուցիոն ըմբոստության նկարագրությամբ, ստեղծվում այդ գաղափարները մարմնավորող գեղարվեստական կերպարներ: Այս իմաստով առաջինը նշանակալից է Ա. Վշտունու «Ռամ-Ռոյ» պոեմը (1925 թ.): Այն հնդիկ և չին մեծ ժողովուրդների բարեկամությունն արտացոլող առաջին երկն է մեղանում և միաժամանակ նրանց նկատմամբ հայ ժողովրդի ջերմ սիրո, անկեղծ բարեկամության արտահայտությունը:

Ուսումնասիրելով նախապատերազմյան տարիների սովետաճայ գրականությունը մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից, նկատում ենք, որ այս շրջանի գրականության կենտրոնական թեմաներից մեկը հանդիսանում է անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը:

Այս տարիների սովետաճայ գրականության մեջ լուրջ րաջներ են կատարվում նաև եղբայրական մյուս ժողովուրդների կյանքի պատկերման ուղղությամբ: Հատկանշական է այն փաստը, որ մեր դրականության մեջ ստեղծվում են ուսումնարգևանք առաջին դրական կերպարները՝ Օգնյով, Խրամոյ՝ Սևունցի

«Մովսիսորշում» վիպակից, կիգա՝ Արադու «Ջրվեժի ցուքում» վիպակից, նլմա՝¹ Հուրյանի «Հողի արյունը» պոեմից և այլն։ Սա այն նորն է, որ բերել է սովետահայ գրականությունը։ Թող որ այս կերպարները գեղարվեստական լիարժեք կերպարներ չեն դեռ, առանձին դպրերում գրքային են, սխեմատիկ, բայց այսուհանդերձ անսպասան արժանի են ուշադրության, որպես ուսումնարգուղական կերպարի կերտման ուղղությամբ արված առաջին լուրջ քայլեր։

Նախապատերազմյան տարիների սովետահայ գրականությունը, վերարտադրելով անդրկովկասյան ռեսպուբլիկաների և դրա վրական ժողովուրդների անխախտ քայրեկամությունն ու համագործակցությունը սոցիալիզմի համար մղվող պայքարում, ռեալիստորեն ցույց տվեց, որ այդ բարեկամությունն ընթանում է ուսումնած ժողովրդի և եղբայրական մյուս ժողովուրդների հետ բարեկամական կապերի ընդլայնման-դարգացման պայմաններում, գեղարվեստորեն պատկերելի պատմական այն մեծ ճշմարտությունը, որ

եղբայրության սիրով դրվեց մեր աշխարհում ամեն քար,
եղբայրության մեր խոյացավ մեր մեծ ամրոցն անկործան։

Միայնակ սար էր ամեն մի ժողովրդի կամքն անդող,—
Որ բարձրանում էր դեպի մեր՝ հարթության մեջ դաշտերի,
Մենք գրկեցինք սիրով իրար, և բարձրացավ հավերժող
եղբայրության լեռնաշղթան Սովետական աշխարհի

¹ Դ. Սարյան, Բանաստեղծություններ, Երևան, 1954, էջ 133։